

բունէ, այն ժամանակ ապա զեղարուեստական սակզմադործութեան օրինօք՝ նոյն իսկ բանադործութիւնը դարու ճաշակի համեմատանդադար միշտ պիտի փոփոխուի մինչև որ անձանաշէլի դառնայ՝ Նախ և առաջ բանադործութիւնից դուրս կը հանուի գերբնական տարրեր, առանց որոյ ոչ մի կրօնական տեսարան խորհուրդ չունի։ Ապա որովհետև գեղարուեստը պատմութիւնից և բնութիւնից միայն մի քանի իրողութիւններ է փոխարինում որպէս զի մնացածը բեմական պահանջներէ համեմատ և ըստ քմաց զօրացնէ կամ նոր յօրինէ և որովհետև այսպիսի նորասիրութիւնները՝ տանդուլեան գաղափարներէ հաստատուն հիմքն են խախտում ապա ուրեմն յիշեալ փոփոխութիւնները բողոք և ընդդիմութիւն կը յարուցանեն նոյն իսկ լուսաւորեալ և թերահաւատ շրջանների մէջ։ Յորասիրին թոյլ է արվում ազգերէ ինչ որ ուզենայ, բայց ոչ՝ ամենայն բան բեմի վերայ հանդիսացնել, բեմի վերայ գերակշռող հանգամանք է դառնում ժողովրդեան ստորին խաւի կրօնական պահանջը։ Եւ իրօք Օրեր Ամերգաութի մէջ այսպիսի պահանջները առաջնակարգ են։ Տեղական արուեստը բացէրաց զեղջկական արուեստ է և միայն այն պատճառով մինչ այսօր պահպանուած է, որ ըստ իւր տեսակի բարեպաշտական է։ Թող միջնադարեան խորհուրդը արդի թատրոնի տիպ ստանայ—և օտարերկրացիներից էլ ոչ ոք չի երթայ Օրեր Ամերգաութ, Փարիզն ու Լոնդոնը թողած։

Այժմ դառնանք երկրորդ կողմը՝ ի նըկատի առնուելով միայն կրօնականը մինչի կատարած աշխարհի հաստատուն սրբութեան երկրպագութիւնը, կամ այն կրօնական իդէալը՝ որ բարեպաշտի սրտում անսասան կանգուն է։ Իսկական կրօնական տեսակէտից՝ զեղարուեստը մերժելի է։ Գեղարուեստը՝ որպէս կրօնական գաղափարներ աւանդելու համար մի հնար՝ է հեթանոսական աւելորդութիւն, բարեպաշտութիւնը կարօտ չէ արաքին նեցուկների։ Եստիպապէս կրօնական գեղարուեստը՝ հերետիկոսութիւն է, սակայն երբ որ արդէն մի ժողովրդեան մէջ այն արիւն և մարմին է դարձել և մանաւանդ երբ որ ժո-

ղովրդեան վերայ բարեբար կերպով է ազդում նա պէտք է այդ տեղ փայփայուի՝ այն ևս խիստ պահպանողական կերպով։ «Բրիտտոսի չարչարանքը» Օրեր Ամերգաութի մէջ պահպանուած նշխարքի պէս մի բան է, որ ժողովրդեան առաջ դուրս է բերում և փափուած տիի պէս 10 տարին մի անգամ բացում է։ «Հաստատուն կոցէք աւանդութեան» ոչինչ մի՛ փոփոխէք, ասաց Լուդովիկոս Ա.ը Օրեր Ամերգաութեցիներին։—Մենք էլ նոյնը կարող ենք կրկնել։ Օրեր Ամերգաութի ներկայացումները՝ անցած դարերի հնութիւնը յիշատակող մնացորդներ են, նոքա այնպիսի ժամանակների արտադրած կրօնական գեղարուեստ են, երբ որ հաւատը աւելի զօրեղ է եղել և այդ մնացորդը այժմ աւանդութեամբ պահպանում է զեղջուկը, որ իւր գեղարուեստական վարժութեամբ՝ լուս պատրաստուած է այդպիսի պահպանութեան համար։

Ս. Մ.

ԵԿԵՂԵՅՏԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ.

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ.

— Լեոն ԺԳ. իւր ներկայ թուականի հսկաներ 4 (ն. տ.) հրատարակած կոնդակով Ֆրանցիսկեան կարգի ստորաբաժանումները վերացնում և մի ընդհանուր կանոնադրութիւն է հաստատում այդ կարգին պատկանող բոլոր կրօնաւորների համար։ Եթէ ի նկատի ունենանք այն կարեւոր դերը, որ Ֆրանցիսկեանները խաղացել են պատմութեան մէջ՝ հասկանալի կրկին, որ Պապի այս նոր նշանաւոր քայլը իւր զօրեղ պատճառները պէտք է ունենար։ Ֆրանցիսկեան կարգը ամենահինն է այսպէս կոչուած մուրացիկ կարգերից, որի հիմնադիրը եղել է ԺԳ. դարի սկզբներում Ֆրանց Ասսիսցին՝ կաթոլիկ եկեղեցւոյ արժանապէս ամենայնաբարձի սուրբերից մէկը, արդէն երկու տարի իւր մահից յետոյ սրբոց կարգը դասուած և սրովխանման վարդապետ պատուանունն ստացած, նորա նպատակն էր սկզբում իւր շուրջը մի եղբայրութիւն ժողովել, որ Քրիստոսի իւր աշակերտներին տուած պատուէրների համաձայն կենար պէտք է վարէր և աւետարանը քարոզէր անհաւատների ու եկեղեցւոց խորթացանդների մէջ, բայց արդէն նորա կենդանութեան ժամանակ այդ եղբայրութիւնն այնչափ մեծացաւ, որ

Անորոշ Գ. պապը, չնայած իւր նախորդի մի ընդհանուր ժողովով տուած վճռին՝ այլ ևս կրօնաւորական կարգեր չհաստատուել, ճանաչեց իրբն մի նոր կարգ «կրտսեր եղբայրներ» անունով, այն պայմանաւ միայն, որ նորա կանոնադրութեան առաջին կէտը լինէր՝ անպայման հնազանդութիւն պապին:

Քրանցիսկեանները, ինչպէս և քիչ ժամանակ յետոյ յառաջ եկած Գոմինիկեանները մուրացիկ էին կոչուում այն պատճառաւ, որ ոչ մի սեփականութիւն չպէտք է ունենային և մուրացկանութեամբ պէտք է ապրէին, բայց շատ չանցած նոքա այնչափ զօրացան և ազատ նուիրարբերութիւններով այնչափ հարստացան, որ հարկ եղաւ նախկին կանոնների մէջ փոփոխութիւններ մտցնելու: Այդ հանգամանքը մի մեծ գծութեան առիթ եղաւ և Քրանցիսկեաններն երկու կուսակցութեանց բաժանուեցան՝ խոստապահներ, որոնք չէին կամենում ոչ մի փոփոխութիւն թողլ տալ հին կանոնների մէջ, և յարմարուողներ, որոնք յարմարուել էին կամենում ժամանակի յառաջ բերած նոր պայմաններին: Այս կուսակցութիւնները մեծ դեր խաղացին մանաւնդ յաջորդ դարում, եկեղեցական մեծ ժողովների միջոցին, երբ խոստապահ կուսակցութեան ծայրահեղ պապերի դէմ կռուող աշխարհական իշխանութեան կողմն անցան և եկեղեցուց ազատ պետութեան գաղափարի ջերմ պաշտպաններ հանդիսացան: Այսպէս, չնայած որ Քրանցիսկեաններն, ինչպէս նաև նոցա կարգակից Գոմինիկեանները, պապական եկեղեցուն ամենամեծ ծառայութիւնն էին մատուցել, ժողովրդեան զանազան խաւերի մէջ կրօնական դժացումն զարթեցնելով և հետը միասին միջնադարեան պապականութեան գաղափարները տարածելով, այդ գաղափարների համաձայն գիտութիւն՝ կաթոլիկ աստուածաբանութիւն մշակելով և պապերը շատ վաղ իմացան այդ ծառայութիւնը գնահատել, սակայն երբէք պակաս չեղան նոցա մէջ կեդրոնախոյս, պապական աթոռին անհանգստութիւն պատճառող տարրեր: Զվերացաւ մանաւնդ Քրանցիսկեան երկու կուսակցութիւնների մէջ եղած մաքառումը, ուր և նորանոր բաժանումների առիթ եղաւ: Ժ.Ձ. դարում այդ երկու կուսակցութիւններն իրբն երկու առանձին կարգեր ճանաչուեցան՝ սեփական ղեկավարներով. բացի դորանից խոստապահների գրկում յառաջ եկաւ Կապուցիկներ կարգը, որոնք այդ անունն ստացել են իրենց կրած, եւրոպացիների համար շատ օտարոտի, վեղարանման գլխանոցից: Պապական նոր կոնգակը ոչ թէ այս երեք կարգերի մէջ եղած բաժանումն է վերցնում, այլ այն երկրորդական ստորաբաժանումները, որոնք ժամանակի ընթացքում յառաջ են եկել հիմնական կարգի՝ խոստապահների մէջ: Յարմարուողներն ու Կապուցիկները պահում են իրենց նախկին կարգերն ու արածութիւնները: Մնացած

բոլորը, որոնք չորս գլխաւոր խմբերի էին բաժանուած, պէտք է միանան և մի ընդհանուր անուն կրեն՝ Քրանցիսկեան կարգի ամենահին անունը, «Կրտսեր եղբայրներ»:

Մեզ յայտնի չէ, թէ ինչն է առիթ եղել այս քայլն անելու, բայց հաւանականաբար նա հետեւեալ է ներկայում Հռովմէական եկեղեցւոյ մէջ տիրապետող ձգտման՝ կեդրոնացնելու որչափ կարելի է եկեղեցական իշխանութիւնը, նորա գործուն ոյժերը մի սկզբունքի ներքոյ դնելու և միօրինակութիւն մտցնելու ամենուրեք, թողլ չտալու որ ինքնուրոյն գաղափարներ յառաջ գան, անհատական շարժմանց պատճառ լինին: Յայտնի է որ կրօնական կարգերի մէջ իսկապէս գործունեայ դեր կատարողն այժմ Յիսուսեան կարգն է միայն, և այդ կարգը կարծես ձգտում կ'ընեն բոլոր միւսներին, եթէ ոչ նոցա առանձին անուանակոչութիւնները վերացնելով, գոնէ իւր հոգին նոցա մէջ ներշնչելով: Գուցէ մի այդպիսի ներշնչումն է նաև Պապի ներկայ կարգադրութիւնը, Յամենայն դէպս նորա ամբողջ կոնգակի մէջ ձգտումն է երևում Քրանցիսկեան կարգի առանձնայատկութիւններն ու դարաւոր աւանդութիւնները ոչնչացնելու և տեղն այնպիսի բան դնելու, որ նոյն կարգին պատկանող կրօնաւորներից շատերին անհաճոյ պէտք է լինի: Այդ պատճառաւ նա կարեւոր է տեսնում ամենակտրական կերպով յայտնելու, որ ոչ որ չպէտք է համարձակի իւր կոնգակը քննադատութեան ենթարկել կամ իւր հաստատած կանոնադրութեան մէջ որ և է փոփոխութիւն մտցնել, նկատողութեան արժանի է այս տեսակէտից նաև այն հանգամանքը, որ կարգապետ նշանակել է նա ոչ թէ նոյն անձին, որ առաջ բոլոր չորս խմբերի ընդհանուր գլուխն էր, * այլ Ալեանդարէն կոչուած խմբի գլխաւորին, որ խիստ դէմ էր միութեան գաղափարին:

— Անտիոքի կաթոլիկ ասորիների պատրիարք Բենհամ Բիննին վախճանել է, Այդ պաշտօնի մէջ հաստատուել էր նա 1894 թուին:

— Փարիզի նուիրակը պապի կողմից մի փառահեղ ալքում է ներկայացրել Քրանսիոյ նախագահ Ֆ. Ֆորին Լեոն Ժ.Վ. մի ինքնագիր նամակի հետ: Այդ ալքումը ներկայացնում է Վատիկանի մի բաժնի վերջերս վերանորոգած Բորջիաների բնակարանի՝ պատերի նկարները լուսատիպով, նախագահը շնոր-

* Պապի կարգադրութեամբ նախկին բոլոր պաշտօնականներ պիտի ե հրամարական թաղին եւ նոր ընտրութիւններ չի նկին: Քրանցիսկեաններն, ինչպիսի եւ ուրիշ նման կարգեր, նախնականքն են բաժանում այն երկիրները, որոնց վերայ խառնաւում է նոցա գործունէութիւնը, իւրաքանչիւրն իւր առանձին գլխաւորն է ունենում, որ անմիջական յարաբերութեամբ մէջ է Հռովմում նստող կարգապետի հետ եւ իսկ սա մի խնամակալ կարգիմայի միջոցաւ պապի հետ:

Հակալուծիւն յայտնելով այդ թանկագին բնօրինակ համար՝ նորա մէջ տեսնում է համակրութեան մի նոր ցոյց դէպի Ֆրանսիացիները՝ «որոնք սիրում են նորան, որովհետեւ գիտեն թէ սիրուած են նորանից»:

— Ի՞նչ է նստում Հռովմէական եկեղեցուն նոր սուրբեր հռչակելը՝ ցոյց են տալիս նորերս հրատարակուած պաշտօնական տեղեկութիւնները՝ որոնցից երևում է, որ այս տարուայ մայիս 27-ին այդ առթիւ տեղի ունեցած հանգէսների համար ծախսուել է մօտ 85,000 բուրլի դրամ:

— Թէ ինչպէս են վերաբերուում կաթոլիկ միսիոնարները դէպի իրենց օտարադաւան գործակիցներն արևելքում՝ մի տխուր օրինակ են ներկայացնում Իսլանդ անունով եզովիտի հետեւեալ տողերը՝ Գալլիլիայում գործող բողոքական բժշկուհիների վերաբերեալ՝ որոնք այդ հեռաւոր, բժշկական օգնութիւնից բոլորովին զուրկ նահանգում ձրի բժշկութիւնն էին անում և դեղեր բաժանում իրրեւ թէ այն պատրուակով միայն, որ բնակիչներին մոլորեցնեն ս. Գիւրգիւրի: «Այդ ստոր գործը, որ է հոգիները թունաւորել մարմինը բժշկելու պատրուակով, կատարում էին նոքա Բասսա կոչուած տեղւորում: Լուծերի աշակերտներն արդէն մի զարոց ունէին այդտեղ և պատրաստուում էին մեծ շէնք գնելու կաթոլիկ եկեղեցու մօտ, որպէս զի մասամբ զարոցի և մասամբ տաճարի (չէ կամենում եկեղեցի ասել) համար յարմարեցնեն, նոքա շատ գաղտնի հետեւողներ ունէին, որոնք միայն դիպուածի էին սպասում, որպէս զի իրենց բողոքականութիւնը խոստովանեն: Սակայն նախախնամութիւնը խանգարեց նոցա ծրագիրները: Անկայի եռանդուն եպիսկոպոսը խնդրեց Յիսուսեանների գլխապետին, որ մի կամ երկու միսիոնար տայ աղանդաւորների դէմ արշաւանք սկսելու: Ինձ նշանակեցին այդ բանի համար. և ես սկսեցի իսկոյն բողոքականութեան զիմակը վար առնել: ցոյց տուի, թէ ինչպէս նա աստուածաշունչը կեղծում է՝ ուրանալու համար աւանդութեան ս. Պետրոսի գլխաւորութեան, Մարիամի մեծութեան և ընդաւանքները: Ես պատմեցի նորա հիմնադրի Լուծերի կեանքը և նորա ստատիկի մահը և ընդ Այս փաստերն իրենց աղեցութիւնն ունեցան և բողոքականները կորցրին օր աւուր իրենց ուղբի տակի հօղը: Նորին Ասեմութիւնը (եպիսկոպոսը) մտածեց, որ հասել է արդէն ժամը մի վերջնական հարուած տալու: Նա համաձայնութիւն կայացրեց տեղական կառավարութեան հետ և բողոքականների զարոցը, այդ աղանդի պատուարը, զինուորական ուժով փակել տրուեցաւ: Մի քանի օր յետոյ եկաւ եպիսկոպոսը, որ իւր հօտն աղատել էր բողոքական գայի ճանկերից և հաւատացեալներին ապահովեց ընդ միշտ բողոքականների հրապոյրներից՝ յայտարարելով, որ

բողոքականների հետ որ և է յարաբերութիւն ունեցողն առանց այլեայլութեան բանադրանքի կենթարկուի:

— Ֆրանսիայում կաթոլիկ եկեղեցւոյ մէջ տիրող բարոյական և կրօնական անկման մասին իրենք կաթոլիկները մեծ տրտուեցներ են յայտնում: Հոգեւորական լինել ցանկացողների թիւն այնչափ պակաս է, որ ամեն տեղ քահանաներ պակաս են: քարողիչ չկայ: Կաթոլիկական զարոցները, որոնց վերայ ահագին ծախսեր են լինում, սպասած արդիւնքը չեն տալիս: Հողիւ 5% սովորողներից հաւատարիմ է մնում զարոցում ընդունած սկզբունքներին: 5 բարձրագոյն կրթարաններում, որոնց նպատակն է մրցել պետական համալսարանների հետ, ուսանողների թիւը պակաս է միշտ ցանկացածից: Ժողովուրդը եկեղեցական կարգեր պահում է, բայց հաւատ չկայ:

— Փարիզի եկեղեցիներից մեկում, որ Գոմի-նիկեան կրօնաւորների ձեռքն է, նկարել են սեղանի ետեւ պատի վերայ Քրիստոսի մի հակայական պատկերը, որ 15 մետր բարձրութիւն ունի: Քրիստոս սպիտակ զգեստներ է հագել և ճառագայթաբաձակ գլխի վերեւ սաւառնում է աղանձաւ ս. Հոգին: 15 մետր լայնութեամբ բաղունները տարածած Նա Իւր գիրկն է հրաւիրում հաւատացեալներին: Նա յօղին թուում է, թէ Նա կապոյտ երկնքից ելնում, առաջ է գալիս:

Կաթոլիկ եկեղեցական աշխարհի մէջ մեծ իրարանցումն ձգեց այն հանգամանքը, որ յայտնի ֆրանսիացի պատեր Շարրոնելը դուրս եկաւ Հռովմայ եկեղեցուց, Հայր Շարրոնելը յայտնի է բարոյականութեան և կրօնի մասին դրած երկերով: Մի քանի տարի սորանից առաջ նա առաջարկեց դուրսել Փարիզի 1900 թուի աշխարհահանդիսի ժամանակ մի կրօնական համաժողով, որպիսին դուրսուել էր 2իկագոյում 1893-ին: Ամերիկայի ծիրանաւոր Գիրրոնը հաւատացնում էր Շարրոնելին, թէ Պապը հաւան է նորա առաջարկին: Իսկ այժմ, երբ գրեթէ ամեն ինչ պատրաստուելու վերայ է, նոյն ծիրանաւորը իւր խօսքը յետ է առել: Շարրոնելը այդ վերագրում է Ատրիկանի ֆրանսիական եպիսկոպոսների խաղին, ուստի և գրութեամբ յանուն Փարիզի արքեպիսկոպոսի յայտնում է, որ ինքը դուրս է գալիս Հռովմայ իշխանութիւնից: Նա իւր նամակի մէջ ասում է՝ «Երկարամեայ փորձը ինձ այն համոզմունքի է բերել, որ ծառայելով այն մարդկանց, որոնք ներկայումս կառավարում են եկեղեցին, չի կարելի ծառայել Աստուծուն: Աս չեմ՝ կարող համբարշտ մնալ այն եկեղեցական կարգին, որ կրօնը գործ է դնում իրրեւ միջոց բարոյական և հասարակական ճնշման: կրօնը դարձել է մարդկային քաղաքականութեան գործիք և այլ ևս նորա նպատակը չէ սրտի մաքրութիւնը

Աստուածային զաղափարներին մօտեցալը՝ բարոյականութեան սիրոյ և եղբայրութեան սկզբունքների պահպանութիւնը։

— Այս պակաս ուշադրութեան արժանի է Լեհացի Քսենդ Ստոյեպլովսկու ներման խնդիրը։ Մի քանի ժամանակ սորանից առաջ Աւստրիական Լեհաստանում Ստոյեպլովսկին տեսնելով իւր հօտի ծննդւած վիճակը աղնուական Պաների կողմից, անցաւ ժողովրդեան կողմը ի պաշտպանութիւն նորա իրաւանց։ Աղնուականների դուրը չեկաւ այս վարմունքը. ուստի և ամբաստանեցին նորան իբրեւ վնասակար մի յեղափոխականի և մատնեցին Պապին։ Պապն էլ առանց գործը քննելու՝ բանադրեց Ստոյեպլովսկուն։ Այժմ Ստոյեպլովսկին անձամբ գնալով Հռոմ և բացատրելով Պապին Գալիցիայի ժողովրդի վիճակը և Պաների հարստահարութիւնները, ոչ միայն արժանացաւ ներման, այլ և Կրակովի Պուզինայ եպիսկոպոսը հրաւիրուեցաւ բացատրութիւն տալու։ Գործից երեւցաւ, որ թէ Կրակովի եպիսկոպոսը և թէ Գալիցիայի միւս եպիսկոպոսները յաջողեցրել են Ստոյեպլովսկուն բանադրանաց տակ դնել միայն նորա համար, որ ժողովրդոց քարոզել է քրիստոնէական հաւասարութեան սկզբունքները նոյն մտքով, ինչ մտքով որ ինքը Պապն է հրատարակել իւր կոնդակով։

— Անցեալ տարի Սերբիացւոց Ալէքսանդր թագաւորը՝ այցելելով Լեոն ԺԳ Պապին, երկար խօսակցութիւն է ունեցել Սերբիայում կաթողիկէ եկեղեցական վարչութիւն հաստատելու մասին։ Այժմ լրագիրները հաղորդում են, որ արդէն դաշն (կոնկորդատ) է կապուած Պապի հետ և նշանակուած է Բելգրադում կաթողիկէ եպիսկոպոս։ Քանի որ Սերբիայում կաթողիկէների թիւը համեմատելով օրթոդոքս Սերբիացւոց հետ շատ փոքր է, ուստի Ռուսաց եկեղեցական թերթերը զգուշացնում են օրթոդոքս եկեղեցւոյ վարչութեանը կաթողիկէ կղերի ուսնձգութիւններից և մանաւանդ վախենում են, որ նոր եպիսկոպոսի գործունէութեան արդիւնքը միաբարներ թիւը կաւելացնէ ի վնաս օրթոդոքսութեան։

— Վարչապայի բնակիչներից մինը տոացել է Պապից առաքելական օրհնութիւն՝ այն պատճառով, որ այդ պարոնը ծնուել է Լեոն ԺԳ-ի ծննդեան օրը՝ 1810 թուի մարտի 2-ին ըստ նոր տումարի և Յովակիմ է կոչուում։ Իսկ այդ անունը Պապի մկրտութեան անունն է (Յովակիմ—Վիկենտիոս Պէշչի)։

— Փարիզում մի խումբ բարեպաշտ կաթողիկէների, ցանկանալով աշխարհական թատրոնի անբարոյական ներկայացումներից հասարակութիւնը դէպի բարոյականը հրաւիրել, փորձ փորձեց քրիստոնէական թատրոնի սկիզբն դնելու և մօտերս առաջին ներկայացումն եղաւ։ Ներկայացրին մի ողբերգութիւն Ադամ և Եւայի կեանքից։ Առաջին

փորձն անյաջող է անցել և սպասած տպաւորութիւնը չէ թողել հանդիսականների վերայ։

— Իլլովի հոգեւոր դպրանոցը, որ մինչև այժմ գտնուում էր օրթոդոքս հոգեւորականութեան ձեռքը, Լեհացի ծիրանաւոր Լեզոսովսկու առաջարկութեամբ, ասում են, անցնելու է Լեհ ճիզդուների իշխանութեանը։ Այս լուրը մեծ զժգոհութիւն է պատճառել օրթոդոքս համայնքին։ Բայց ի նկատի առնելով նորա ծննդւած վիճակը և Գալիցիայում գործող աղնուական Պաների և կաթողիկէ կղերի ազդեցիկ լինելը ոչ միայն Գալիցիայում, այլ և Հռոմում, հաւանական է, որ Պապը օգուտ քաղէ Լեզոսովսկու առաջարկից և զրկէ օրթոդոքս եկեղեցին այդ հաստատութիւնից։ Թէև կարելի է սպասել, որ շատ հեշտութեամբ չեն յօժարի այդ կարգադրութեանն օրթոդոքսները և ամեն կերպ կը պաշտպանեն իւրեանց իրաւունքը։

— Պապը ի լոյս է ընծայել իւր բանաստեղծութիւնների նոր հրատարակութիւնը *Cornina novissima* վերնագրով, որի մէջ դեռեւորւած են նաև մի քանի նոր գրուած ոտանաւորներ։

— Մարոկկոյի կաթողիկէ եպիսկոպոսը, որ Սպանիայի ելեմտից նախարարին բանադրանաց էր ենթարկել, ինչպէս հաղորդում են Մագրիզից լրագիրներին, յանկարծական մահով վախճանել է։

ՌՌԻՍԱՑ ԵԿԵՂԵՑԻ։

— Դարմաշտպտում՝ թագուհու Կայսրուհւոյ ծննդավայրում, ի ներկայութեան Նոյն Մեծութեանց և Մեծ Դուքսի ընտանեաց հոկտեմբերի 14-ին հիմնարկուեցաւ Ռուսաց նոր եկեղեցւոյ շինութիւնը, որով արեւմտեան քրիստոնէայ աշխարհի մէջ մի նոր Ռուսաց եկեղեցի ևս աւելանալու է։

— 1869 թուի մայիսի 2-ին Բարձրագոյն հաստատուած Ս. Գիրքը Ռուսաստանում տարածող ընկերութիւնը հրատարակել է իւր գործունէութեան 1896 թուի հաշիւը, որից երևում է, որ անցեալ տարուայ ընթացքում ընկերութիւնը տարածել է 87,378 օրինակ Ս. Գիրքը։

— Վերջին ժամանակ Ռուսաց հոգեւոր իշխանութիւնը մեծ ուշադրութիւն է դարձնում քարոզի վերայ և այդ ձգտման համեմատ էլ եկեղեցական թերթերը ճիգ են թափում ժողովրդական պահանջին բաւականութիւն տալու։ Այս նպատակով Պետերբուրգի հոգեւորականութիւնը աշխատում է միջոցներ գտնել կիրակէ և տօն օրերը սուրբ պահել տալու համար։ Հոկտեմբերի 3-ին կայացած հոգեւորականաց ժողովի որոշմամբ ամեն միջոց ի գործ են դնելու, որ յաջողեցնեն Պետերբուրգում գինեւները տօներին գոց պահելու մասին պատշաճաւոր վարչութեանց տնօրէնութիւնը ձեռք բերել։

ինչպէս որ արդէն Ֆինլանդիայում և Պսկով քաղաքում արել են: Միևնոյն ժամանակ հոգեւորականութիւնը յանձն է առնում, ըստ հովուական պարտաւորութեան, ամեն տեղ, ուր հնարաւոր կը լինի, առանց թերանալու քարոզել Աստուծոյ բանը:

— Միբրիայի հարաւ-արեւելեան սահմանակից քարոզչական հաստատութիւններն ու առանձին միսիոնար քահանաները շատ անգամ զանգատուում են, թէ մեծ դժուարութիւնների են հանդիպում, իւրեանց գործունէութեան մէջ, որովհետեւ Արեւայի կողմից բաղմամբիւ հեծանոս կրօնաւորներ (չու) և հոգեւորականներ (չաման) անցնում են սահմանագիծը և ողորմութիւն խնդրելով մուրացկանութեամբ շրջում են քրիստոնէութիւն ընդունած իւրեանց աղգակիցների մէջ, մոլորեցնելով նոցա և դէպի հեծանոսութիւն հրապուրելով նորահաւատներին: Միսիոնարների ցանկութիւնն է՝ սոցա ազատ մուտքը արդիւնէ տալ, որպէս զի միսիոնարութեան առանց այն էլ ծանր գործը նոր դժուարութիւնների չհանդիպի:

— Մի այլ աւելի գլխաւոր պատճառ է գրտնում միսիոնարների գործի սակաւ յաջողութեան համար Աւետկայի թեմական թերթը՝ սորա ասելով, թէ միսիոնարները և թէ տեղական քահանաները չեն ծանօթ իւրեանց խնամոց յանձնուած հեծանոսների վարք ու բարքին և կրօնական սովորութիւններին, օրինակ՝ նորամկրտեալ Չերեմիսների մէջ պահպանուում է առանց եկեղեցական ամուսնութեան ապօրինի կապեր կանանց հետ հաստատելու սովորութիւնը, որով մկրտուած Չերեմիսը իւր հեծանոսական կարգերն էլ է պահում, քրիստոնէականներն էլ՝ նա մի և նոյն ժամանակ ոչ կատարեալ քրիստոնէայ է, ոչ էլ կատարեալ հեծանոս: Ի հարկէ քրիստոնէայ հոգեւորականութեան վերայ մեծ պարտք կայ ուսումնասիրել հեծանոսների բոլոր հաւատալիքները, սովորութիւնները, ծէսերն ու կարգերը, որպէս զի կարողանան միջոցներ գտնել հետզհետէ նոցա մէջ քրիստոնէական ճշմարտութիւնները տարածելու և վարժեցնելու նոցա քրիստոնէական եկեղեցւոյ ծէսերին և արարողութիւններին, բացատրելով նոցա ամեն մի կարգի ներքին խորհուրդը, Բայց այդ գործի համար միսիոնարների գործունէութեան շրջանները այնքան ընդարձակ են, որ հոգեւորականները չեն հասնում իւրեանց քահանայական պարտքերն անգամ կատարելու, ուստի և ժամանակ չունին այդ կարեւոր գործին նուիրուելու համար:

— Այս առթիւ Ուստիւզի թեմական առաջնորդն ասում է, որ իւր թեմում ծխական եկեղեցիները 100, 150 և մինչև անգամ 200 վերստ հեռու են գտնուում, ուստի միանգամայն չի կարելի յուսալ, թէ տեղական հոգեւորականութիւնը կարող կը լինի յաջողութեամբ պատերազմել ա-

ղանդաւորների դէմ և նոցա բաղմանալու առաջն առնել, նոյնպէս մեծ հետեանք չի սպասում առաջնորդը և շրջիկ քարոզիչներից, որոնք հազիւ հազ մի երկու անգամ հանդիպել կարողանան ամեն մի գիւղ տարուայ ընթացքում: Այլ նա առաջարկում է մարդիկ պատրաստել, նոյն իսկ տեղական ժողովրդի միջից և դորա համար անհրաժեշտ է համարում մի միսիոնարական դպրոց հաստատել Ուստիւզի մէջ:

— Արօնական դաստիարակութեան խնդիրն ևս Ռուսաց ժողովրդի մէջ առ հասարակ և մանաւանդ այն նահանգներում, ուր բաղմամբիւ աղանդաւորներ կան, շատ է դժուարեցնում Ռուսաց եկեղեցական թերթերը: Չնայելով որ ընդհանրապէս ընծայացուների քահանայութեան համար ընտրուած են թեմական դպրանոցական ընթացքը աւարտողների միջից, սակայն շատ անգամ, առ ի չգոյէ պղպիսիների, ձեռնագրութեան են արժանանում թերուսներ և անպատրաստներ, Սոցա վերայ յոյս դնել, թէ ժողովուրդ կը հովուեն և նորա հոգեւոր մխրթարութեան գործին կը ծառայեն, բնաւ չի կարելի, Այդ պատճառով պահանջուում է, որ այդ թերուսները առանց պատշաճաւոր քննութեան չը ձեռնագրուին:

— Ռուսաց լրագրութեան մէջ մի շատ կարեւոր խնդիր է առաջ բերուած, Աւճակագրութիւնը ցոյց է տալիս, որ ժողովրդական դպրոցներում տարիներով ուսումն առնող և նոյն իսկ դպրոցական ընթացքն աւարտող գիւղական երեխաները ժամանակ անցնելուց յետոյ մոռանում են գրել—կարգալը, Նրեկայքը գրագիտութիւն սովորում են և ապա կեանքի մէջ մոռնելով, ոչ մի յարմարութիւն չեն ունենում և ժամանակ չեն գտնում իւրեանց ուսածը գործ դնել, ուստի և հետզհետէ նորից անգրագէտ են դառնում: այնպէս որ ղինուորակոչից յետոյ ծառայութեան մոտողներին նորից այբուբեն սովորեցնելու հարկ է լինում: Այս օտարոտի երևոյթի հետեանքն է, որ գիւղերում չի կարելի գտնել գրագէտ տանուտէր, հարկաժողով և այլն, նոյն իսկ գիւղական գրագրի պաշտօնի համար ըստիպուած են լինում ուրիշ տեղերից բերել պաշտօնաւոր ղինուորներին և ամեն դասակարգից բաւելով հաւաքուածներին: Այն ինչ ժողովրդական դպրոցների ծրագրով ընթացաւարտները պէտք է կարողանան՝ զգիտակցօրէն, արագ և լաւ առողանութեամբ կարդալ և թելադրութեամբ գրել ուսած կանոններին համեմատաւ: Եւ սոքա կեանքի մէջ ամեն ինչ մոռանում են և վերադառնում են իւրեանց նախնի անգրագիտութեան աստիճանը: Այս ցաւալի երևոյթի պատճառն ուսումնասիրելով, պէտք է այն եղրակացութեանը գալ, որ բաւական չէ միայն գրագիտութիւն սովորողների թիւը շատացնել, այլ և անհրաժեշտ է միջոցներ գտնել

գրագիտութիւնը ժողովրդի մէջ պահպանելու Սորա համար առաջարկուում է կրկնողական և կիւրակներեայ դասընթացք հաստատել, ժողովրդեան մէջ արժանագին գրքեր տարածել, գրադարաններ բանալ և այլն, որ ներկայումս շատ քիչ տեղերում կան։ Ի նկատի առնելու է և այն հանգամանքը, որ ծխական դպրոցների աշակերտների մէջ այգալիսի երևոյթ է տեսնուած և այդ բացատրուում է նորանով, որ ծխական դպրոցի աշակերտը եկեղեցական գրքերի ընթերցանութեան և երգեցողութեան սէր է ստանում՝ դպրոցում, ուստի և եթէ ոչ միշտ, գոնեայ երբեմնապէս միջոց է ունենում եկեղեցւոյ մէջ թէ կարդալու և թէ երգելու, որով և մոռացութեան չի տրուում ուսած գրագիտութիւնը։

—Նորերումս վախճանուած Ռուսաց Հոգեւոր Դպրոցական Յանձնաժողովի նախագահ աւագ քահանայ Ա. Պարնովի տեղ Ս. Սինոդը նշանակել է Պետերբուրգի Ս. Իսահակայ եկեղեցւոյ աւագ քահանայ Տ. Պետրոս Սմիրնովին, որ երկար տարիներ դպրոցական խորհրդի փոխ-նախագահ է եղած և յայտնի է իւր գործունէութեամբ։

—Աղանդաւորներին գէպի ուղղափառ եկեղեցին դարձնելու վերաբերութեամբ եղած ջանքերը Ռուսաց Հոգեւոր իշխանութեան կողմից չեն պահուում այն յաջողութեամբ, որ կարելի էր սպասել։ Ռուսաց Հոգեւոր թերթերը դորա գլխաւոր պատճառը ժողովրդեան խոր տգիտութեան մէջ են որոնում և նորա կրօնական—բարոյական կրթութեան գործին նպաստելու ոչ մի միջոց չեն խնայում։ Բայց և այնպէս գեա աղանդների թիւը բազմանում է և ժամանակ է հարկաւոր նոր սեւրունդ պատրաստելու համար։

Զարմանալին այն է, որ ինչ անհեթեթ միտք և քարոզ ասես, որ չի ներգործում ժողովրդեան տգէտ խաւերի մէջ և հետեողներ գտնում։ Սորանից մի քանի ժամանակ առաջ մեծ իրարանցումն ձգեց ամբողջ Ռուսաստանում Տերովնեան շրջանում (Խերսոնի նահանգ) կատարուած աներեւակայելի գէպքը, որով քսան հոգի ինքնայոժար կամքով յանձն առան կենդանի թաղուել, նեոի գալուստը և աշխարհիս վերջը մօտեցած համարելով, նոցա քարոզիչը կոյս Վիտալիան ինքն էլ անձնասպան եղաւ իւր զօհրի հետ։ Յիշեալ կոյսը մի Զախարիյ անուն վանականի մոլար վարդապետութեան տարածողը եղաւ և շնայելով վարդապետութեան անհեթեթութեանը և մարդուս առողջ գատողութեան միանգամայն հակառակ լինելուն, այնուամենայնիւ նա գտաւ անձնազոհ հետեողներ, որպիսիներ մի խելացի գաղափարի համար իսկ գտնելը դժուար է։ Զախարիյ վանականի վարդապետութիւնը նեոի գալստեանն է վերաբերում։ Նորա ասելով, երբ մարդիկ իւրեանց լայն հագուստները կը փոխեն և նեղ (եւրոպական) հագուստ կը հագ-

նեն, այլ և այլ օծանելիքների թէյ ու շաքար գործ կածեն, այդ նշան է նեոի պարզ և լիակատար թագաւորութեան. ուստի և այլ ևս ապրել չարժէ, ով որ Աստուծոյ արքայութեանն է ձգտում, պէտք է հեռանայ աշխարհից և կենդանի թաղուի հողի մէջ։ Այս քարոզը ազդում է այն աստիճանի որ թէ ինքը Վիտալիա կոյսը և թէ նորա հետեողները մտնում են գետնափորների մէջ և նոցա ցանկութեամբ փոսերի մուտքը շարում է մի մոլեռանդ խելագար, որ իւր մօրն անգամ չի խնայում՝ այնքան մեծ է եղել նորա յափշտակութիւնը։ Արդարեւ այսպիսի մոլար վարդապետութեանց դէմ կռուելու համար միակ փրկարար միջոցը ժողովրդական լուսաւորութիւնն է, որ կարող է բանալ կուրացած ռամկի մտաւոր և հոգեւոր աչքերը և լուսաւորել նորան։

—Ռուսաց քարոզչական գործը Ասորի նեստորականների մէջ Պարսկաստանում և Տաճկաստանում բաւական յաջող կերպով շարունակուում է։ Այս մասին Անտարքերի արքեպիսկոպոսի ուղարկած քարոզչաց աւագը անգլիացւոց տրտունջները բառնալու մտքով յայտնում է, որ իւր եօթնամեայ գործունէութեամբ ինքն է նպաստել Ռուսաց քարոզիչների յաջողութեանը նորանով, որ նա երբէք ցանկութիւն չէ ունեցել նեստորականներին անգլիկան եկեղեցւոյ ծոցը մտցնել, այլ միայն նպատակ է դրել միացնել նոցա արեւելեան եկեղեցւոյ հետ, որից նոցա անջատուել էին նեստորական վարդապետութիւնը ընդունելով և այդպիսով շեղուել քրիստոնէական ուղղափառ դաւանութիւնից։ Եւ որովհետեւ, ասում է անգլիացի քարոզիչը, ասորիները խորին տգիտութեան մէջ են գրտնուում, ուստի կանոնաւոր դպրոցներ են բաց արել և յոյս ունին, որ Ասորիները արեւելեան եկեղեցւոյ հետ միանալով կը գտնեն քաղաքականապէս էլ մի հզօր պաշտպան, որին խիստ կարօտ է այդ ճրնշուած ժողովուրդը՝ ընդդէմ վայրենի Բրդերի։

—Տազանրոգի շրջանի Գոլոգայեփկայ Սլոբոդայում մի ինքնակոչ մարգարէ է երեացել, Այդ մարգարէն յիշեալ գիւղի բնակիչ Քեօգոր Արրամով Լուկաշեփնէ, որ շատ ուխտատեղիներ, նոյն իսկ Երուսաղէմ գնացած մարդ է։ Անբաղաւնալով իւր գիւղը, նա սկսում է ժողովել իւր մօտ հարեաններին աղօթելու պատրասկով և նոցանից նուէրներ է հաւաքում յանուն մի վանքի շինութեան։ Այդ ժողովներում նա ասում է իւր համադիւղացւոց, թէ ինքը Աստուծոյ և Աստուածամօր հետ է խօսակցում, հրեշտակներ է տեսնում, ես սին եմ, ես սուրբ եմ, ես Եղիան եմ։ Ի հաստատութիւն այս վերջին խօսքի նա ասում է, որ Երուսաղէմում երեացել է նորան Եղիան և ասել է, թէ Լուկաշեփի երեսը և Եղիայի երեսը մի երես է։ Դեռ աւելին՝ նա ասում է, երբ ես համ-

բուրում էի Եղիայ մարգարէի պատկերը, իմ մոտը մի ժամանակ կպաւ պատկերին: Եւ այս բաւական էր ռամիկ դիւզացու համար, որ նա հաւատար Լուկաշեփի ասածներին և եթէ ժամանակին նորա քարոզութեանց առաջը չառնուի, անշուշտ մի նոր աղանդ էլ կաւելանայ Լուկաշեփի անունով: Իսկ այս խարեքան թողնելով իւր կնոջը, բերել է մի աղջիկ իւր մօտը և հաւատացնում է տգէտ ամբոխին: Թէ իւր կինը սատանայ է և այդ աղջկան իւրեան Աստուած է տուել...

ՀԵՆՐԻԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

— Վանէայի (Կրէտէ կղզի) յունաց եպիսկոպոսը Ռուսաց հիւպատոսից տեղեկացել է, որ Թաւառը Վայսըը հրամայել է իւր հաշուով վերանորոգել քաղաքի քրիստոնէից թաղը, որ վերջին ժամանակ այրուել էր: Մեծացնել եկեղեցին և նշանաւոր գումար յատկացնել Վանդիայի Բեռնիայի և Վանէայի աղքատ ընակիչներին բաժանելու համար:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

— Լոկտեմբեր 4—7-ին (ն. տ.) Բերմին քաղաքում կայացաւ Նեոթին միասիրտի ԻԹ. համաժողովը, բողոքական եկեղեցւոյ և գիտութեան բազմաթիւ աչքի ընկնող ներկայացուցիչների մասնակցութեամբ: Գլխաւոր ատենախօսութիւններից մէկի նպատակն էր ցոյց տալ, թէ ինչպէս պէտք է յառաջ տանել ներքին միասիրտը իւր նուիրական գործը, որ է հասարակութեան քրիստոնէութիւնից խորթացած անգամներին կրկին գրաւել, առանց շփոթուելու նման սոցիալական շարժումների հետ, և միւսին թէ «ինչ նպատակներ և ինչ սահմանագծեր են գրած կանանց շարժման համար աւետարանի կողմից»: Վերջին խնդիրը մանաւանդ կենդանի վիճարանութեանց առարկայ եղաւ և արդիւնքն էր աշխատելով հանդերձ գէմն առնելու այն բոլոր վնասակար ձգտումների, որոնց հետեւանքն է կտրել կնոջ ընտանեկան շրջանից, այնպէս չլարուել, որ կանանց շարժումը խորթանայ եկեղեցւոյց և հակաքրիստոնէական ուղղութիւն ստանայ, այլ քանայ քրիստոնէական սկզբունքներով դէպի ուղիղ նպատակ առաջնորդել այն:

Աւետարանական Միութիւնը, որի նպատակն է բողոքականութեան շահերը պաշտպանել կաթոլիկութեան դէմ, մանաւանդ այն տեղերում, ուր բողոքականները կաթոլիկների համեմատութեամբ ըզգալի փոքրամասնութիւն են կազմում՝ իւր Ժ. տարեկան ընդհանուր ժողովն ունեցաւ Գերմանիոյ հիւսիս-արեւմտեան բաժնի Կրիֆելդ քաղաքում: Այդ ժողովին առանձին կենդանութիւն էր տալիս այն հանգամանքը, որ բողոքական եկեղեցին վերջերս մի քանի աչքի ընկնող յարձակումների է

ենթարկուել պապի և պապականների կողմից: Գլխաւորը Արարատի նախորդ համարում յիշած պապի կոնդակն է Վանդիոսի յորեկեանի առթիւ, որի գէմ այս ժողովն ևս պարտք համարեց հանդիսաւոր բողոք յայտնել: Պէտք է նկատել, որ այդ կոնդակի յառաջ բերած յուզումն այնքան է տարածուել Գերմանիայում, մինչ եղել են պահանջողներ պապի մօտ եղող կայսերական դեսպանին ետ կանչելու: Աւետարանական միութիւնը համարում է պապի թուղթը «ստուծութիւններով լի մի հայհոյութիւն աւետարանական դաւանութեան, ծաղր պատմական ճշմարտութեան դէմ, բուռն խանգարումն զանազան դաւանանքների եկեղեցեաց մէջ տիրող խաղաղութեան»: Ատենախօսներից մէկն աշխատում էր ցոյց տալ, որ կաթոլիկ ուղարամոտականութիւնը «ամենամանր վտանգն է գերմանական ազգի համար: Մի ուրիշը նկարագրեց այն արգելքները, որ յարուցանում է պապական պրոպագանդան բողոքական միասիրտների դէմ հեթանոս ազգերի մէջ, յատկապէս Մատակասկարում, ուր ֆրանսիական կառավարութեան օգնութեամբ Յիսուսեանները բռնի կաթոլիկ են դարձնում աւետարանականներին, նոյն իսկ երբեմն գնդակահար անել տալիս իրեն ապստամբ ներկայացնելով նոցա և խելով նոցա եկեղեցիներն ու դպրոցները: Պակաս զայրոյթ չէր յառաջ բերում նաեւ այն հանգամանքը, որ կաթոլիկ եկեղեցին որոշել է բողոքականութիւնից դարձող աստուածաբանների համար (ի նկատի ունենալով այն նեղ վիճակը, որի մէջ շատերը դտնուում են, երբ աւարտելուց յետոյ շատ տարիներ պաշտօն չեն կարողանում ստանալ) դրամական նպաստներ հայթայթել: Գորա հակառակ շատերը ժողովականներից պահանջում էին, որ Միութիւնը միջոցներ ձեռք առնէ աւետարանականութիւնը զօրացնելու Գերմանիայում, ոչ բողոքականների մէջ: Այնու ամենայնիւ Միութեան վճիռը մնում է «խաղաղութիւն պահպանել կաթոլիկ երկրացիների հետ քանի նոքա համաձայն կրթմանն այն սկզբունքին, թէ սեփական համոզումը խոստովանել և արիւթաբար պաշտպանել պէտք է, բայց ոչ որի չստիպել, որ նոյնն ընդունէ և չարհամարհել օտարադաւանին»:

Լոկ. 22-ին Բորմինում Հայոց օմանկակող միութեան զանազան բաժինների ղեկավարները մի խորհուրդ ունեցան, որտեղ հետեւեալ որոշումներն արին: ա) Գերմանական Օմանկակող Միութիւնը դադարեցնում է Հայաստանի սովետների և անպաւորսպարների մասին ընդհանրապէս հոգալը և իւր կոչումն այսուհետեւ նորա մէջ է տեսնում, որ պահպանէ և ընդարձակէ արդէն հիմնած որբանոցները, կամ նման հաստատութիւններ հիմնէ և իւր հոգատարութիւնը որբերի վերայ կեդրոնացնէ: բ) Ղեկավարների խումբը կեդրոնական դրամարկդի, ինչպէս և Բերեկի ու Խարբերդ-Միդ-

րէի որբանոցներն հաշիւներն ստուգելուց յետոյ՝ ընդունում է 1 հոկտ. 1897 մինչև 1898 թ.-ի համար առաջարկած նախահաշիւը. Բերէկի որբանոցի նախահաշիւը կը լինի 38,744 մարկ 70 ֆ. (մօտ 19 հազար ռուբլի). Մեզրէինը 27,605 մ. 30 ֆ., Այդ որբանոցներում կան այժմ 10 գերմանացի և 30 հայ այր և կին պաշտօնեաներ, գ) Աեկալարներն խումբը որոշում է նոյեմբեր ամսուայ մէջ կայանալիք ընդհանուր ժողովին խնդրել, որ արտայայտէ իւր համակրութիւնը գէպի հայ որբերի պահպանութեան գործը և աշխատէ նոյնպիսի համակրութիւն արծարծելու աւետարանական եկեղեցւոյ մէջ:

27 հոկ. Բերլինում Հայոց օժանդակող միութեան հրատիրած մի հրապարակական ժողովի առաջ արդէն ծանօթ պատտոր Ֆիլիք կարգաց իւր պարսկական և տաճկական Հայաստանի մէջ կատարած ծանապարհորդութեամբ ձեռք բերած տեղեկութիւններն Հայաստանի արդի վիճակի մասին: Արձակը նոյնն է, ասում էր նա, ինչ որ մի տարի առաջ, տարբերութիւնն այն է միայն, որ այժմ տասնեակ հազարներով շին կոտորում, այլ տասն այստեղ, քսանն այնտեղ, հարիւրը մի այլ տեղ իսկ լրագիրներն այդպիսի շինքն բաների վերայ ուշադրութիւն չեն դարձնում: Նա պատմեց հայերի սպանման, տանջանքների և տառապանքների սոսկալի դէպքեր, որոնց ինքն ականատես էր եղել կամ ականատեսներէց լսել: ցոյց տուաւ, թէ որպիսի ծայրայեղ անհեթեթութիւն է այս սարսափների համար կրկին և կրկին անգամ հայ ժողովուրդին մեղադրել, մեղադրել տասնեակ հազարներով ոտքի տակ տուած կանանց և մանուկների, հարիւրներով մորթնդերն եղած քահանաների, որոնք ամենահազանդն էին պետութեան, բայց ամենամեծ հաւածանքը կրեցին կամ իբրեւ վատթար վաշխառուների խմբակցութիւնն երկայացնել մի ժողովուրդի, որի 98 % երկրագործ է:

Անգլիկան պրեսպետերեան եկեղեցւոյ ծոցում մեր դարի սկզբներին յառաջ եկած նշանաւոր մի երեւոյթ է Իրվինգեանների աղանդը, որի հիմնադիրն Եղուարդ Իրվինգ համոզուած էր, թէ հաւատոյ և աղօթքի զօրութեամբ կարելի է վերականգնել առաքելական ժամանակը և վերանորոգել ս. Հոգւոյ շնորհները՝ ընդունել խօսել, մարգարէութիւն ևն., նորա հետևողներն այս հիման վերայ յառաջ զընալով իրենց մէջ եղող մարգարէների ցուցմամբ մօտ 60 տարի առաջ 12 առաքելներ ընտրեցին և պնդում էին թէ նոցա բոլորի կենդանութեամբ Քրիստոսի Բ. գալուստը պէտք է տեղի ունենայ, բայց երբ այդ առաքելները մէկը միւսի ետեւից վախճանել սկսան, նոքա փոխեցին իրենց հայեացքը և սպասում էին, որ վերջին առաքելալը չը վախճանած Քրիստոս կը գայ, Այժմ այդ վերջին


առաքելալն ևս վախճանել է և այդ առթիւ շրջութեւթիւն է ընկել Իրվինգեանների մէջ (որոնք բաւական հետևողներ ունին նաև Անգլիայից դուրս ուրիշ բողոքական երկրներում) և մի մասը բաժանուելով կրկին 12 առաքելներ է ընտրել և նախկին յոյսերով սպասում է Բ. գալուստան:

ԲԱԺԻՆ ՀԵԹԱՆՈՍԱՅ.

— 2ինաստանի Տեանձին քաղաքում միսսիօնարների դէմ մի մեծ ցոյց է եղել վերջին ժամանակները հետեւալ պատճառով: քաղաքի մէջ շատ յաճախ երեխաներ գողանալու դէպքեր են եղել, որ իսկապէս ասելով սովորական երեւոյթ է այնտեղ, Յայտնի իրողութիւն է, որ 2ինաստանում երեխաներին փողով գնում են և տանում Կանտոն քաղաք վաճառելու: Բայց լինում են այնպիսի դէպքեր էլ, որ փոխանակ գնելու ուղղակի գողանում են, Թէ գնողները և թէ գողացողները բոլորն բերդներն են միշտ. բայց միսսիօնարներին թշնամի բարձր դասակարգը ժողովուրդի մէջ տարածել էր լուր, իբր այդ գողութիւնը միսսիօնարներն են անում: Մինչև անգամ միսսիօնարների մասին սկսել են հաւատացնել իբր նոքա մի տեսակ հեղանիւթ ունին, որից բաւական է մի քանի կաթիլ երեսայի գլխին կաթեցնել, որ երեխան հետեւի միսսիօնարին: Այս տեսակ անհեթեթ լուրերով քաղաքացւոց այնքան զրգուեցին բարձր դասակարգի մարդիկ, որ երբ տպագրուած յայտարարութիւններ ցրուեցին ժողովուրդի մէջ, հրատիւրելով նոցա կոտորել կաթոլիկներին, մի քանի կաթոլիկ 2ինացիներ անմեղ զոհ եղան ամբօրի կատաղութեամբ: Մի կաթոլիկ 2ինացու անդթաքար սպանեցին միայն այն կասկածով, թէ նա իւր յետեւից գնացող երեսային գողացել է, այն ինչ ոչ մի ապացոյց չկար, թէ տղան հետեւելիս լինէր նորան, Զարմանալին այն է, որ ոստիկանութիւնը անմեղ ծանաչելով 2ինացուն, փոխանակ պաշտպանելու նորան, յանձնում է ամբօրին, որ կատաղած՝ տեղն ու տեղը սպանում է նորան՝ չընդունելով ոչ մի ապացոյց նորա անմեղ լինելու մասին:

— 2ինաստանում քրիստոնէութիւն տարածող միսսիօնարները շատ մեծ դժուարութիւնների են հանդիպում իւրեանց գործը յաջողութեամբ առաջ տանելու դէմ և շատ անգամ էլ մարտիրոսական պսակն է բաժին մնում նոցա, բայց և այնպէս նոքա շին վճատում և Կենաց Բանն են քարոզում: Մի այդպիսի արևմտահայ դէպք տեղի է ունեցել անցնալ հոկտեմբերին Ննդշոֆու ուխտատեղում գերմանական միսսիօնարների դէմ: Նոքա ամենայն սրբոց տօնին այլ և այլ կայարաններից ժողովուրդ էին Ննդշոֆու: Այդ հանգամանքից օգուտ քաղելով տեղական աղետականներն ու հեթանոս

գիտնականները գրգռում են մոլեռանգ ամբողջը որ գիշեր ժամանակ յարձակուում են միասինարների վերայ և նոցանից երկուսին սպանում: Պէտք է ասել, որ Ննդշոֆուն շատ նշանաւոր ուխտատեղի է. նոցանից ոչ հեռու ծնունել է իւրեանց կրօնի հիմնադիր Կոնֆուցիոսը: այնտեղ է ապրել նա և այնտեղ քարոզել: ուստի և շատ բնական է Ննդշոֆուի ամբողջի կատարի մոլեռանգութիւնը: Գերմանական կառավարութիւնը ազգու միջոցների է ձեռք դարկել Չինաց կառավարութիւնից այս գէպքի համար բաւարարութիւն և երաշխաւորութիւն ստանալու նպատակով:



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

Братская помощь пострадавшимъ въ Турціи Армянамъ. (Նդրայրական օգնութիւն ծածկաստանում ֆլաստում հայերին). Մոսկուա, 1897 ամի:

Սորերումն լոյս տեսաւ այս վերնագրով մի բաղմարովանդակ և մեծադիր հատորով դրականական—գիտնական ժողովածու, որի հրատարակութեան համար Մոսկուայում մի առանձին խմբադրական յանձնաժողով էր կազմուել պ. Դրիգոր Զանդիեանի ղեկավարութեամբ:

Վերջին 3-4 տարիների ընթացքում հայոց ազգի կրած անասելի և անօրինակ հալածանքն ու կոտորածը ծածկաստանում քարերին անգամ աղաղակել տուին և ամբողջ քրիստոնեայ աշխարհի կարեկցութիւնը շարժեցին դէպի մի աշխտատեղ և խաղաղ ժողովուրդ, որ տարապարտուց տաճկաց ձեռքից անխնայ կոտորուում էր: Շատ գրուեցաւ սոցա մասին, շատ զրբեր և զրբոյններ հրատարակուեցան. նոյն իսկ պաշտօնական վաւերաթղթեր երեւան եկան ի հաստատու-

թիւն այն սոսկալի դաւադրութեան, որ ծածկաց կառավարութիւնը կազմել էր հայոց դէմ՝ այդ խղճալի և խաղաղասէր ժողովուրդը խսպաւ բնաջինջ անելու: եթէ ոչ աշխարհի երեսից, զոնեայ ծածկաստանի միջից և այդ զիւական մտադրութիւնը սկսուեցաւ իրաւործուել միայն նորա համար, որ բարենորոգումներ մտցնելու պաշարումից ազատ մնայ ծածկաց կառավարութիւնը: առարկելով թէ՛ հայ չկայ, որի համար այդ հարկաւոր է:

Մեր առաջ դրած մեծահատոր զիբբը այն կարեկցութեան արգասիքներից մինն է, որ Ռուսաց գրականութեան մէջ յայտնի բանասերների աշակցութեամբ խմբադրուեցաւ և լոյս տեսաւ յօգուտ թշուառացեալ հայերի: որոնք իւրեանց տունն ու տեղը թողած, մերկ և անօթի թափառում են Կովկասի և հարաւային Ռուսաստանի ամեն անկիւններում: մեծաւ մասամբ դոքա զրկուած են աշխատող ձեռներից, որոնք ծածկաց բարբարոսութեան զոհ են զնացել: հալածական և աստանդական թողնելով իւրեանց օջախի կանանց և երեխայոց: Այսօր այդ հալածանաց զոհերն են, որ ամեն մի մարդու, մոռանալով քրիստոնեայ մարդու, էլ ուր մնաց արիւնակից հայ եղբայրների և քոյրերի կարեկց սիրան են ձմրում և դէպի բարեգործութիւն ու ընկերսիրութիւն հրաւիրում նորան: Կովկասը, մանաւանդ Նրեւանի և Կարսի նահանգները, ևս առաւել Ս. Էջմիածինը, ահա քանի տարի է, որ ամենայն սիրով մի աստուածահաճոյ գործ են կատարում՝ խնամելով թշուառացեալ հայերին: կերակրելով նոցա և պատուարելով: Դոցա աղաղակը հասել է ամեն տեղ, դոցա համար փող, շորեր և այլ անհրաժեշտ իրեր են ժողովում և մատակարարում: իսկ վերջին ժամանակ մի մեծ գործ էլ է աւելացել՝ այն է որբերի խնամատարութեան հոգալը: Մեր բարեխնամ կառավարութիւնը երկիցս թոյլ է տուել ընդհանուր հանգանակութիւն բանալ կարօտեալ զաղթականների համար և ահա այժմ ուսւրանասերներն իւրեանց լուսման են ձգում այդ սուրբ գործի համար:

Հրատարակուած զիբբը շատ մեծ խնամքով է կազմուած, ուստի և արդէն արժա-